տեղերում պատնեշավորված են: Դեբեդն ունի նաև ոռոգման կարևոր նշանակություն: Նրա ջրերով հիմնականում ոռոգվում է ցածրադիր վայրերի պտղատու այգիների մեծ մասը: Դեբեդ գետի երկարությունը Փամբակի գետաբերանից 176 կմ է: Փամբակ գետը սկիզբ է առնում Ջաջուռի լեռնաշղթայից՝ 2,090 մ բարձրության վրա, իսկ Դեբեդը՝ Փամբակի և Զորագետի միախառնման կետից: Դեբեդի գետավազանի բնակչությունը մոտ 290 հազար է: Գյուղատնտեսությունը գետավազանի տնտեսության հիմնական ճյուղն է:

Փամբակի գետավազանում ևս էկոհամակարգը խաթարված է մարդածին գործունեության արդյունքում: Քաղաքային կենցաղային կեղտաջրերը, ինչպես նաև անասնապահությունից եկող հոսքաջրերը էական բացասական ճնշում ունեն Փամբակ գետի ավազանի վրա: Որոշիչ է նաև սննդի վերամշակմամբ զբաղվող ձեռնարկությունների հոսքաջրերի ազդեցությունը:

Գետավազանի քաղաքները և գյուղերը չունեն կենցաղային կոշտ թափոնների կառավարման և կեղտաջրերի հեռացման ժամանակակից համակարգեր: Քաղաքներում բացակայում են կեղտաջրերի մաքրման կայանները, իսկ գյուղական համայնքներում՝ կոյուղացանցը: Կենցաղային կոշտ թափոնները կա'մ թափվում են կամայական վայրերում (հաճախ գետի ափին կամ հենց գետի մեջ), կա'մ տեղափոխվում են Վանաձոր, Սպիտակ, Տաշիր, Ստեփանավան, Թումանյան և Ալավերդի քաղաքների աղբավայրեր:

The editor of the material:
The Regional Environmental Centre for Caucasus, Armenia Branch Office

Website: www.rec-caucasus.org
www.rec-caucasus.am

Website of the Project: www.wmp.ge/3

«Գործընկերություն ընդդեմ գյուղական կանաչ տարածքների աղտոտման» (Հայաստան, Վրաստան, Մոլդովա, Ռումինիա)

Joint Operational Programme Black Sea Basin 2014-2020
Regional Environmental Centre for Caucasus,
Armenia Branch Office
2020
Joint Operational Programme Black Sea Basin 2014-2020 is co-financed by the European Union through the European Neighbourhood Instrument and by the participating countries: Armenia, Bulgaria, Georgia, Greece, Republic of Moldova, Romania, Turkey and Ukraine.

This publication has been produced with the financial assistance of the European Union.
The contents of this publication are the sole responsibility of the REC Caucasus Armenia Branch Office and can in no way be taken to reflect the views of the European Union.

Project funded by EUROPEAN UNION

Common borders. Common solutions.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՏԵՐԻ ԱՂՏՈՏՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Դեբեդ և Փամբակ գետերի գետավազանների նկարագիրը և աղտոտման աղբյուրները

«Գործընկերություն ընդդեմ գյուղական կանաչ տարածքների աղտոտման» տարածաշրջանային ծրագրի թիրախային բնակավայրերը գտնվում են Հայաստանի երկու խոշոր՝ Դեբեդ և Աղստև գետերի ավազաններում: Ծրագրի գլխավոր նպատակը՝ նպաստել ԵՄ մոտեցումների վրա հիմնված թափոնների կառավարման լավագույն փորձի ներդրմանը:

Կոշտ թափոնների վերաբերյալ ԵՄ քաղաքականությունը շեշտում է թափոնների կրճատման, կրկնակի օգտագործման (օրինակ՝ վերաօգտագործվող տարաներ) և վերամշակման (օրինակ՝ մետաղ, ապակի, պլաստիկ) կարևորությունը: Թափոնների բնագավառում ԵՄ քաղաքականության նպատակն է արտադրանքից առավել գործնական օգուտներ քաղել և ստանալ նվազագույն քանակության թափոն: Եվրոպական միության երկրներում շրջակա միջավայրի վիճակը բարելավելու հիմնական մոտեցումներից մեկը «աղտոտողն է վճարում» սկզբունքն է:

Աղտոտման հիմնախնդիրներից շատերն արդյունք են արդյունաբերության ու գյուղատնտեսության մեջ ոչ արդյունավետ գործելակերպի, ինչպես նաև հումքի ոչ արդյունավետ օգտագործման: Հաճախ արդյունաբերական ձեռնարկության կամ գյուղատնտեսության՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության կրճատումը հանգեցնում է տնտեսական ցուցանիշների բարելավման:

Աղստևի գետավազան

Աղստև գետը սկիզբ է առնում Փամբակի լեռնաշղթայի հյուսիսային լանջերից: Մինչև Գետիկի գետաբերանը հոսում է հարավարևելյան ուղղությամբ, ապա ուղղվում է դեպի հյուսիս–հյուսիս-արևելք, դուրս է հոսում հանրապետության սահմաններից և թափվում Քուռ գետ: Աղստևը սկզբում մի փոքրիկ առվակ է, սակայն Դիլիջանի մոտ հորդանալով դառնում է ջրառատ գետ: Սնվում է գերազանցապես ձնհալքից և անձրևաջրերից: Վտակներից հայտնի են Գետիկը և Ոսկեպարը: Գետի խորությունը մեծ չէ, սակայն վարարումների ժամանակ դառնում է խիստ վտանգավոր: Գետի ընդհանուր երկարությունը 133 կմ է, որից 99 կմ-ը՝ ՀՀ տարածքում: Գետավազանի մակերեսը 2589 կմ² է:

Աղստևի ամենախոշոր վտակը՝ Գետիկը, որի երկարությունը 56 կմ է, սկիզբ է առնում Սևանի լեռնաշղթայի հյուսիսային լանջերից, հոսում է դեպի հարավ-արևմուտք և թափվում է Աղստև՝ աջ ափից: Աղստևի հովիտն անտառապատ է, ստորին և միջին հոսանքներում հովիտը լայնանում է, այնուհետև աստիճանաբար միանում Քուռի դաշտավայրին: Աղստևի գետավազանի բնակչությունը մոտ 85 հազար է: Տնտեսական գործունեության հիմնական բնագավառներն են փոքր ձեռնարկությունները, ինչպես նաև գյուղատնտեսությունը, ներառյալ մշակաբույսերի արտադրությունն ու անասնապահությունը: Արդյունաբերության հիմնական բնագավառներն են սննդի ու խմիչքների արտադրությունը:

Աղստև գետավազանում էկոհամակարգը խաթարված է մարդածին գործունեության արդյունքում: Ավազանի քաղաքներն ու գյուղերը չունեն պինդ թափոնների ու կեղտաջրերի դեմ պայքարելու ժամանակակից միջոցներ: Քաղաքներում չեն գործում կեղտաջրերի մաքրման կայաններ, իսկ գյուղական համայնքներում բացակայում է կոյուղացանցը: Պինդ թափոնները կա'մ թափվում են որտեղ հարմար է (հաճախ հենց գետի մեջ կամ գետի ափին), կա'մ էլ՝ թափվում են Դիլիջանի ու Իջևանի մոտակայքում գտնվող երկու աղբավայրերը, որոնք գտնվում են Աղստև գետի ափին: Իրականացվող գյուղատնտեսական գործունեությունը, այդ թվում անասնապահությունը, էական բացասական ազդեցություն ունի գետի ջրերի որակի ձևավորման վրա:

Փամբակի / Դեբեդի գետավազան

Դեբեդը Հայաստանի տարածքի ամենաջրառատ լեռնային գետն է: Դեբեդի գետավազանը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիսային մասում: Գետավազանի մակերեսը 3,790 կմ² է: Դեբեդի գետավազանը բնութագրվում է բազմազան ռելիեֆով, որտեղ բարձրությունների տարբերությունը գերազանցում է 2,800 մ-ը, այն հիմնականում հոսում է նեղ և խոր կիրճերով: Տեղատարափ անձրևների ժամանակ հաճախ նրա վարարած ջրերը դուրս են գալիս իրենց հունից և մեծ ավերածությունների պատճառ դառնում : Այդ պատճառով Դեբեդի ափերը վտանգավոր